ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՐԱՄԱՆ

« 02 » մարտի 2020 թվական N 16 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ կետով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշման հավելվածի 21-րդ կետի 8-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի համար նախատեսված պարգևատրման ֆոնդից աշխատողների պարգևատրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ղեկավար՝ Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության բնապահպանության
և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի
2020 թվականի մարտի 02-ի N 16- Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) աշխատողների՝ հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար դրամական պարգևատրման պայմանները, ընթացակարգը, չափերի որոշման կարգը և դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն կարգի իմաստով Տեսչական մարմնի աշխատողներ են համարվում վարչական, հայեցողական և քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող, քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք (այսուհետ՝ Աշխատող):

3. Աշխատողների դրամական պարգևատրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Տեսչական մարմնի համար նախատեսված պարգևատրման ֆոնդի հաշվին՝ ամսական պարբերականությամբ:

4. Սույն կարգով նախատեսված պարգևատրումները տրվում են սույն կարգի Ձև N 1-ով սահմանված պարգևատրման ենթակա Աշխատողների ցուցակի հիման վրա:

5. Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատողների ցուցակները կազմում և ներկայացնում են տվյալ ստորաբաժանումների ղեկավարները:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև Տեսչական մարմնի քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ցուցակները կազմում և ներկայացնում են համապատասխան ոլորտը կամ աշխատանքները համակարգող կամ Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

7. Տեսչական մարմնի վարչական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց պարգևատրվողների ցանկը որոշում է Տեսչական մարմնի ղեկավարը:

8. Դրամական պարգևատրման ցուցակների կազմման համար հիմք են հանդիսանում տվյալ ժամանակաշրջանում կատարված աշխատանքի և (կամ) հատուկ առաջադրանքների կատարման բովանդակությունը, կատարման ժամկետները, ծավալը, որակը՝ կիրառելով պաշտոնային դրույքաչափի նկատմամբ պարգևատրման գործակից:

9. Աշխատողը դրամական պարգևատրում չի ստանում, եթե պարգևատրման համար սահմանված ժամանակահատվածում նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, որը օրենսդրությամբ սահմանված կարգով մարված կամ հանված չէ կամ դրամական

պարգևատրում տալու վերաբերյալ հրամանն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դադարեցված են Աշխատողի պաշտոնեական լիազորությունները կամ Աշխատողն ազատվել է աշխատանքից:

10. Աշխատողը կարող է ստանալ դրամական պարգևատրում, եթե դրամական պարգևատրում տալու վերաբերյալ հրամանն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Աշխատողը գտնվում է ամենամյա արձակուրդում, ժամանակավոր անաշխատունակության մեջ կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նպատակային արձակուրդի կամ գործուղման մեջ:

11. Դրամական պարգևատրման սահմանված ժամանակահատվածում Աշխատողի նկատմամբ միևնույն հիմքով օրենսդրությամբ սահմանված խրախուսանքի այլ տեսակ կիրառված լինելու հանգամանքը արգելք չէ նրան նույն ժամանակահատվածում դրամական պարգևատրում տալու համար:

12. Տեսչական մարմնի Աշխատողների պարգևատրումները տրվում են Տեսչական մարմնի ղեկավարի անհատական իրավական ակտի հիման վրա:

2. ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

13. Յուրաքանչյուր ամիս Աշխատողների դրամական պարգևատրումն իրականացվում է մինչև համապատասխան ամսվան հաջորդող ամսվա 10-ը՝ բացառությամբ տվյալ տարվա վերջին ամսվա, որի համար դրամական պարգևատրումները բաշխվում են տվյալ բյուջետային տարվա վերջին շաբաթվա ընթացքում:

14. Տեսչական մարմնի ֆինանսահաշվապահական աշխատանքները համակարգող պաշտոնատար անձը յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային շաբաթվա ընթացքում Տեսչական մարմնի ղեկավարին է ներկայացնում տվյալ ամսվա համար հաշվարկված պարգևատրման գումարի ընդհանուր չափը:

15. Սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն կազմված Ցուցակները Տեսչական մարմնի ղեկավարին են ներկայացվում յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային շաբաթվա ընթացքում:

16. Տեսչական մարմնի ղեկավարը յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում իր համաձայնությունն է տալիս ներկայացված Ցուցակների վերաբերյալ և կարող է ներկայացված ցուցակներում կատարել փոփոխություններ ու դրամական պարգևատրում չտալ՝ ելնելով ժամանակաշրջանում յուրաքանչյուր աշխատողի կատարած աշխատանքի և (կամ) հատուկ առաջադրանքների կատարման բովանդակությունից, կատարման ժամկետներից, ծավալից, որակից կամ կիրառելով պաշտոնային դրույքաչափի նկատմամբ պարգևատրման այլ գործակից:

17. Տեսչական մարմնի ղեկավարը սույն կարգի 14-րդ կետի համաձայն ստացված համապատասխան ամսվա համար հաշվարկված պարգևատրման գումարի ընդհանուր չափը, ինչպես նաև սույն կարգի 16-րդ կետում նշված Ցուցակները և սույն կարգի 7-ևդ կետի համաձայն կազմված ցանկը տրամադրում է Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչությանը, որը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է դրանք, նախապատրաստում է դրամական պարգևատրում տրամադրելու մասին Տեսչական մարմնի ղեկավարի հրամանի նախագիծը և ներկայացնում Տեսչական մարմնի ղեկավարի հաստատմանը:

18. Ստորագրված հրամանն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ պարգևատրման գումարների վճարումն ապահովելու համար:

ՁԵՎ N1

Ց ՈՒ Ց Ա Կ

«—»«————» 2020թ. - «—»«————» 2020թ.

ընկած ժամանակահատվածի համար

պարգևատրման ենթակա աշխատողների

Աշխատողի		Պարգևատրման համար հիմք հանդիսացող կատարված աշխատանքի հակիրճ նկարագրությունը	Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվող պարգևատրման գործակիցը
անուն, ազգանունը	պաշտոնը		